

րուն ու չեն զգար, թէ բառի վրայ կը խաղա՛ն: Գիրք մը ամբողջ չի բաւեր Մաթիկին ֆաթրան (հիմա կը գործածեմ այս տարազը, պիտակելու համար սա արկածախնդիր ու ա՛լ աժան գիտականութիւնը, որ յետադարձ մը կ'ընէ մեր մի քանի գրողներուն գրիչին տակ, պատկերով ու ոճով խնամով ծածկելէ յետոյ ծագումին հասարակութիւնը, անցնելու համար իմաստասիրական եւ այլական հայեցողութեան, մեզի մշտապէս պակսած քանի մը ծարաւը աճ-պարարօրէն շահագործելով, վասնզի մենք նոր չէ, որ բառը կը շփոթենք իմաստին հետ, խորութիւնը՝ ծաւալումին հետ) սպառելու: Բայց պարտաւոր եմ մօտենալու ողնասիւնին ու քանի մը խոշոր ոսկորներուն: Ճեմարանական Մաթիկը Հայաստանի մէջ տեսած էր քաղաքացի եւ գիւղացի, օտարներու քաղքենիին եւ բանուորին, շատ տափակցած քիչէով մը՝ պուրժուայի եւ պոլետարին յաւիտենական, յաղթական շերտաւորումը: Ասիկա՝ ողնասիւնը իր վարդապետութեան: Անմահ էին հետեւութիւնները պատմական մաթերիալիզմին, որուն հիացողն էր անիկա: Կը ճանչնար երկու շերտերն ալ, ապրած՝ ըլլալով անոնց մէջ, «կիսած լինելով նրանց կլկլէ հացը», ինչպէս կը զարմացնէր զիս իր տեղական գոյն ստեղծող բառերովը: Էջերով ընդլայնումը անբաւական է սակայն գետեղելու համար իր պատմումը քիչ-շատ հասկնալի մակարդակի մը վրայ: Այն ատեն չէի տառապեր, քանի որ իր պատմածները կը դպէին իմ երեւակայութեանս, հեռու՝ դատողութենէս: Հեքիա՛թ: Բայց պղտոր: Այդ պղտորութիւնը տարօրինակ է, որ հաստատեմ հիմա ալ, յուշերուն մէջը անոնց, որոնք շարժումին մասնակցած են անձնապէս, պատասխանատու դերերով, յաճախ իբր վարիչ: Յեղափոխականներու յուշերը կը ծփան նոյն տարտամութեան մէջ, որով մշուշուած են հիմա՝ մտքիս, Մաթիկին վաւերական ապրումները: Մտքէս չ'անցնիր կասկածի տակ ձգել ատոնց բոլորին ալ ստուգութիւնը: Բայց չեմ կրնար հետեւիլ անոնց պատմումին, ճիշդ ինչպէս կը զարմանայի մեր պատմիչներուն վկայութեանցը վրայ, երբ